

Կ. Ստեփանեան. «ՄՐՏԻ ԽՈՐՔԵՐԻՑ». Բանաստեղծութիւններ. 30 էր. գ. 10 կ. Թիֆլիս 1902 թ.

Պ. Կ. Ստեփանեանի գրքոյկը աւելի ճիշտ կը լինէր անուանել «Տգիտութեան խորքերից»:

Պ. Կ. Ստեփանեանի Սրազը «հրաբորբոք» է, նրա գերեզմանի վրայ լինելու է ոչ թէ «հողաթումբ», այլ «թմբահող», երբ նրա թռչունները երգում են, լսում է ոչ թէ դայլայլիկ, այլ «դայլայլեզ» (որովհետև բանաստեղծին հարկաւոր է յանգ «տեղ» խօսքին), իսկ երբ մարդիկ քնում են, տիրում է ոչ թէ լուսթիւն, այլ «լուս»:

«Մարդկութիւնը բուն է մտել,  
 Լուս է տիրում ամեն տեղ.  
 Թռչունները բուն են մտել,  
 Էլ չէ լսում դայլայլեզ»:

Տ. Յ.

Մաքսիմ Գորկի. «ՄՄՍՅԻ ԴԱՋՏՈՒՄ». Թարգմ. Մարգիտ Մ.—Իսահակեան. 31 էր. գինը 5 կոպ. Ալեքսանդրապոլ, 1902 թ.

«Ի՞նչ ենք մենք այսօր ուտելու և զրտեղ ու ինչպէս», — ասում է «Ամայի դաշտում» պատմուածքի հերոսներից մէկը:

Ընթերցողներից նրանք, որոնք սովոր են ասին օր ճաշել, դուցէ չը գիտեն, իսկ եթէ գիտեն, անշուշտ յաճախ մոռանում են, որ աշխարհումս, նոյն իսկ քաղաքակիրթ երկիրներում կան բազմաթիւ մարդիկ, որոնք առաւօտեան հարց են տալիս իրանց, թէ արդեօք ինչ են ուտելու այդ օրը, և չեն կարողանում պատասխանել այդ հարցին ոչ թէ այն պատճառով, որ այդ կատուած է իրանց ծնողներից, իրանց անտեսուհուց կամ խոհարարից, այլ որովհետև ոչինչ չ'ունեն ուտելու, որովհետև քաղցելը նրանց համար կանոն է, իսկ ուտելը բացառութիւն:

Եւ սակայն նրանք էլ մեզ պէս, ամեն օր ճաշողներիս պէս բանական արարածներ են: Նրանք էլ սովոր են դատել և ընդունակ են զգալ: Նրանք էլ գիտեն կարակացութիւններ անել, օրինակ, թէ «քարթու հացը աւելի կշտացնող է, քան փափուկը, որովհետև քարթու հացի մէջ ջուր քիչ կայ» և ուրիշ շատ ու շատ այդպիսի փիլիսոփայական եզրակացութիւններ, որոնք վերջ ի վերջոյ մեծ փոփոխութիւններ են մտցնելու աշխարհիս երեսին:

Մաքսիմ Գորկին իր հինգ մատի պէս ճանաչում է այդ քարթու հացի արժանաւորութիւնները գնահատողներին, այդ